Ուսանողի ձեռնարկ

7

Քրիստոնեական պրակտիկա

Քրիստոնեական պրակտիկա

ԽՈԼՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Քրիստոնեական պրակտիկա

Կապված տեղական եկեղեցու և նրա պրակտիկայի հետ

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Քրիստոնեական պրակտիկա
Կապված տեղական եկեղեցու և նրա պրակտիկայի հետ
Ուսանողի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Christian Practices, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

ԽՈՒՆՔՅ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Վերջին անգամ վերանայվել է. 10-2022

Բովանդակություն

Գլուխ 1. Տեղական եկեղեցին 5

Ա. Ի՞նչ է նշանակում «եկեղեցի» բառը: 5

Բ. Ինչո՞ւ գոյություն ունի տեղական եկեղեցի: 6

Գ. Ինչպե՞ս կարող եմ վայելել եկեղեցին: 7

Գլուխ 2. Ինչպե՞ս վկայություն տալ 11

Ա. Ի՞նչ է վկայությունը: 11

Բ. Ինչո՞ւ ես պետք է վկայեմ: 11

Գ. Լավ վկայության հիմնական հատկանիշները: 12

Դ. Լրացուցիչ օգնություն: 13

Ե. Տալ սեփական կյանքի վկայությունը: 14

Գլուխ 3. Ինչպես լինել Աստծո տնտես 16

Ա. Ի՞նչ է տնտեսը: 16

Բ. Ի՞նչ է Աստված ինձ տվել, որ տնօրինեմ: 17

Գ. Ի՞նչն է մարդուն դարձնում լավ տնտես Աստծո համար: 18

Դ. Ինչպե՞ս կարող եմ ցույց տալ, որ Աստծո համար լավ տնտես եմ: 20

Ե. Իմ վերաբերմունքն է ցույց տալիս, թե արդյո՞ք ես գործում եմ որպես Աստծո տնտես: 22

Զ. Աստծո տնտես լինելու արդյունքները: 23

Գլուխ 4. Հաղորդություն 24

Ա. Ի՞նչ է նշանակում «հաղորդություն»: 24

Բ. Ի՞նչ հատուկ բաներ են օգտագործվում հաղորդության ծառայության ժամանակ: 25

Գ. Ինչո՞ւ ենք մենք հաց և գինի օգտագործում հաղորդության ծառայության ժամանակ: 25

Դ. Ինչո՞ւ ենք մենք հաղորդություն անում: 25

Գլուխ 5. Ջրի մկրտություն 27

Ա. Ջրի մկրտության հոգևոր իմաստը:.....27

Բ. Ինչո՞ւ ես պետք է ջրով մկրտվեմ:.....30

Գ. Ե՞րբ ես պետք է ջրով մկրտվեմ:.....30

Դ. Ջրի մկրտության արդյունքները:.....30

Գլուխ 6. Աղոթք 32

Ա. Ի՞նչ է աղոթքը:.....32

Բ. Ինչպե՞ս պետք է աղոթեմ:.....33

Գ. Ի՞նչ պետք է ասեմ աղոթելիս: 34

Դ. Որո՞նք են աղոթելու օգուտները:.....36

Ե. Ինչպե՞ս կարող եմ ստանալ իմ աղոթքների պատասխանները:.....38

Զ. Ինչո՞ւ ես չեմ ստանում իմ աղոթքների պատասխանները: 39

Է. Ե՞րբ ես պետք է աղոթեմ: 41

Ը. Ինչո՞ւ է աղոթքն այդքան դժվար: 42

Գլուխ 1

Տեղական եկեղեցին

Այս դասընթացում մենք քննարկում ենք վեց տարբեր թեմաներ, որոնք վերաբերում են նորադարձ քրիստոնյաների ներգրավվածությանը տեղական եկեղեցում: Այդ վեց թեմաներն են՝ տեղական եկեղեցին, ինչպես վկայություն տալ, ինչպես լինել Աստծո տնտես, հաղորդություն, ջրի մկրտություն և աղոթք:
Այս առաջին գլխում մենք կքննենք հիմնական հարցերը, որոնք վերաբերում են տեղական եկեղեցուն և դրա գոյության իմաստին:

Ա. Ի՞նչ է նշանակում «եկեղեցի» բառը:

«Եկեղեցի» բառը մի քանի տարբեր իմաստներ ունի: Երբ դու ինչ-որ մեկի հետ խոսում ես եկեղեցու մասին, կարևոր է իմանալ, թե ինչ սահմանում ես տալիս այդ բառին:

1. Ժամանակակից սահմանում:

Ահա «եկեղեցի» բառի մի քանի սահմանումներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է այդ բառն ընկալվում այսօր:

ա. Շենք:

բ. Համայնք, մարդկանց խումբ, ովքեր ունեն նույն հավատալիքները և պարբերաբար հանդիպում են:

գ. Հարանվանություն. «կրոնական կազմակերպություն, որը մեկ օրինական և վարչական մարմնի մեջ միավորում է մի շարք տեղական համայնքներ» (Webster-ի բառարան): Դրա օրինակներն են՝ Հռոմի կաթոլիկները և Լյութերականները:

դ. Աշխարհի բոլոր քրիստոնյաները:

ե. Կրոնական ծառայություն:

Այս գլխում մենք մեր քննարկումը կկենտրոնացնենք տեղական եկեղեցու վրա՝ հղում անելով հետևյալ սահմանմանը՝ բ. Համայնք, մարդկանց խումբ, ովքեր ունեն նույն հավատալիքները և պարբերաբար հանդիպում են:

2. «Եկեղեցին» Աստվածաշնչում:

Աստվածաշնչում «եկեղեցի» բառն օգտագործվում է երկու ձևով.

ա. Աշխարհի բոլոր ճշմարիտ քրիստոնյաները:

բ. Համայնք, մարդկանց խումբ, ովքեր ունեն նույն հավատալիքները և պարբերաբար հանդիպում են:

3. Եկեղեցու աստվածաշնչյան պատկերները:

Աստվածաշունչն օգտագործում է մի քանի նմանություններ եկեղեցին նկարագրելու համար՝ հատկապես Քրիստոսի հետ փոխհարաբերության մեջ:

ա. Շենք, որի հիմքը Քրիստոսն է
(Ա Կորնթացիներին 3:11, Ա Պետրոս 2:6-8):

բ. Մարմին, որի Գլուխը Քրիստոսն է (Կողոսացիներին 1:18, Եփեսացիներին 1:22-23, Եփեսացիներին 5:23-24):

գ. Հարսնացու, որի ամուսինը Քրիստոսն է (Եփեսացիներին 5:25-32):

Բ. Ինչո՞ւ գոյություն ունի տեղական եկեղեցի:

Ո՞րն է տեղական եկեղեցու գոյության իմաստը: Ինչո՞ւ գոյություն ունի տեղական եկեղեցի: Կան երկու հիմնական պատճառներ, թե ինչու գոյություն ունի տեղական եկեղեցի:

1. Հավատացյալներին օգնելու համար, որպեսզի հոգևորապես ավելի աճեն և ուժեղանան:

Տեղական եկեղեցու գոյության հիմնական նպատակը հավատացյալներին օգնելն է, որպեսզի հոգևորապես ավելի աճեն և ուժեղանան: Առողջ տեղական եկեղեցին կարող է օգնել հավատացյալներին հոգևորապես հասունանալու գործում: Եթե տեղական եկեղեցին չկարողանա դա անել, նա չի իրականացնի իր գոյության հիմնական իմաստը:

2. Ոչ հավատացյալների հետ Քրիստոսի մասին կիսվելու համար:

Սա տեղական եկեղեցու գոյության մեկ այլ կարևոր պատճառ է: Երբ տեղական եկեղեցին օգնում է հավատացյալներին ուժեղանալու համար, հավատացյալները կիսվում են Քրիստոսի մասին իրենց ստացած գիտելիքներով մյուս մարդկանց հետ (Տե՛ս Գործք 2:42-47):

Գ. Ինչպե՞ս կարող եմ վայելել եկեղեցին:

Շատ անգամ նորադարձ քրիստոնյաները եկեղեցում իրենց հարմարավետ չեն զգում: Միգուցե նրանք ոչ մի հավատացյալ ընկեր չունեն: Կամ փառաբանության ձևն է այլ: Ինչպե՞ս կարող են նորադարձ քրիստոնյաները սովորել վայելել եկեղեցին: Ինչի՞ կարիք ունեն նորադարձ քրիստոնյաները, որպեսզի զգան, որ իրենք էլ եկեղեցու մի մասն են կազմում:

Ահա չորս առանցքային ուղեցույցներ կամ սկզբունքներ, որոնք տեղական եկեղեցին բնութագրում են որպես առողջ եկեղեցի: Եթե դու կարողանաս քո տեղական եկեղեցում սկիզբ դնել հետևյալ չորս սկզբունքների իրականացմանը, քեզ համար հեշտ կլինի եկեղեցին վայելել:

1. Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ իրար հետ հաղորդակցվելու համար*:

*Հաղորդակցություն. կիսվել, քննարկել հավատալիքները, ընկերություն զարգացնել, հետաքրքրություն և անհանգստություն ցուցաբերել մյուսների հանդեպ:

Տեղական եկեղեցու հիմնական անելիքներից մեկը մարդկանց համար հնարավորություն ստեղծելն է, որպեսզի մյուս հավատացյալների հետ ընկերանան: Դա մի վայր է, որտեղ բացահայտվում է մարդկանց սիրելու և նրանց հետ շփվելու գեղեցկությունը: Այս հաղորդակցությունը տեղական եկեղեցում կատարում է մի քանի գործողություններ.

ա. Օգնում է ճանաչել մյուս հավատացյալներին:

բ. Հնարավորություն է տալիս քննարկել մեր հավատալիքները:

գ. Սովորեցնում է սիրել մարդկանց:

դ. Օգնում է հասկանալ, թե ինչպես կարող ենք մեկմեկու օգնել:

ե. Օգնում է մեզ՝ աղոթել միմյանց համար:

Հավատացյալները կարիք ունեն մի վայրի, որտեղ նրանք կկարողանան հանդիպել և իրար հետ քննարկել իրենց հավատալիքները:

Գործք. 2:42.

«Եվ նրանք հաստատորեն շարունակում էին առաքյալների ուսմունքի, հաղորդակցության և հաց կտրելու և աղոթքի մեջ»:

2. Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ աղոթելու և երկրպագելու Աստծուն:

*__Երկրպագություն__. ասել ինչ-որ մեկին, որ նա քեզ համար կարևոր է, գովել, հիանալ, պատվել ու մեծարել նրան:

Տեղական եկեղեցին նաև պետք է լինի մի վայր, որտեղ հավատացյալները կարող են սովորել, թե ինչպես երկրպագեն Աստծուն: Դու անձնապես պետք է սովորես՝ ինչպես երկրպագել Աստծուն: Երբ երկրպագությունը դառնա քո կյանքի բնականոն մասը, այն քեզ կմղի դառնալ ավելի լավ քրիստոնյա այն ամենի մեջ, ինչ դու անում ես:

Տեղական եկեղեցին պետք է նաև լինի մի վայր, որտեղ հավատացյալները սովորում են աղոթել Աստծուն: Երբ դու աղոթել սովորես, կկարողանաս Աստծուն բերել քո կյանքի առօրյա իրավիճակների մեջ: Քո աղոթքները պետք է հստակ ուղղվածություն ունենան և չկենտրոնանան միայն քեզ վրա: Սովորի՛ր զրուցելով աղոթել: Խոսի՛ր Աստծո հետ այնպես, ինչպես կխոսեիր քո լավագույն ընկերոջ հետ: Սովորի՛ր շարունակ աղոթել: Կիսվի՛ր Աստծո հետ քո մտքերով, երբ զբաղված ես առօրյա գործերով:

3. Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ լսելու Աստծուն:

Հավատացյալները պետք է սովորեն լսել Աստծուն: Տեղական եկեղեցին կարող է լինել մի վայր, որտեղ ճշմարիտ քրիստոնյաները սովորում են, թե ինչպես լսեն Աստծուն:

Աստված մեզ հետ տարբեր ձևերով է խոսում.

ա. Աստվածաշնչի միջոցով:

բ. Աղոթքի միջոցով:

գ. Սուրբ Հոգու պարգևների միջոցով:

դ. Մյուս հոգևոր մարդկանց միջոցով:

ե. Իրավիճակների միջոցով:

Աստվածաշունչն այն հիմնական ձևերից մեկն է, որով Աստված խոսում է հավատացյալ մարդկանց հետ: Այն պարունակում է ողջ ճշմարտությունը, որն անհրաժեշտ է երկինք գնալու, ինչպես նաև այստեղ՝ երկրի վրա միմյանց հետ հաղորդակցվելու համար:

Աղոթքը մեկ այլ հիմնական միջոց է, որով Աստված հաղորդակցվում է մեզ հետ: Երբ մենք աղոթում ենք, մենք պետք է և՛ խոսենք, և՛ լսենք: Աստված կխոսի մեզ հետ, եթե մենք բավականաչափ դադար տանք, որպեսզի Նա խոսի:

Ա Կորնթացիներին 12:4-11-ում դու կարող ես գտնել Սուրբ Հոգու ինը պարգևները, որոնք տրված են եկեղեցու շինության համար: Սուրբ Գրքի այլ հատվածներ նշում են այլ պարգևներ, որոնք Սուրբ Հոգին տալիս է հավատացյալներին, օրինակ՝ հովիվ, ավետարանիչ, օգնող, բաշխող, առաջնորդ (Հռոմեացիներին 12:6-8, Եփեսացիներին 4:11-12, Ա Պետրոս 4:7-11):

Այս պարգևները Սուրբ Հոգին տալիս է ծառայության մեջ օգտագործելու համար: Դրանք չեն տրվում այն նպատակով, որ պարգևն ունեցող անձնավորությունը մարդկանց ուշադրությունը հրավիրի իր վրա: Այս պարգևները հնարավոր չէ վաստակել, ոչ էլ դրանք հոգևոր հասունության ապացույց են: Սուրբ Հոգին այս պարգևները տալիս է՝ եկեղեցուն և շրջապատի ոչ հավատացյալներին ծառայելու համար:

Աստծո՝ մեզ հետ խոսելու մյուս ձևը ավելի հասուն և իմաստուն հավատացյալների միջոցով է: Հաճախ հասուն հավատացյալները կարող են մեզ փրկել շատ ցավոտ իրավիճակներից ու տառապանքներից, եթե մենք նրանցից խորհուրդ հարցնենք՝ նախքան մեծ որոշումներ կայացնելը:

Երբեմն էլ Աստված մեզ հետ խոսելու համար օգտագործում է իրավիճակները: Եթե դու վերջերս ես ապաշխարել, Աստված, հնարավոր է, ցանկանա, որ դու փոխես քո հարաբերությունները քո հին ընկերներից ոմանց հետ, քանի որ նրանք կարող են բացասական ազդեցություն ունենալ քո կյանքի վրա հիմա, երբ դու դարձել ես ճշմարիտ քրիստոնյա: Երբեմն Աստված սա հստակեցնում է, երբ մենք աղոթում ենք: Կամ, գուցե, քո հին ընկերներից մեկն իրո՛ք նեղսրտում է և ասում. «Լսի՛ր, դու պետք է որոշում կայացնես: Եթե ուզում ես մեր ընկերությունը շարունակվի, ուրեմն պետք է մի կողմ թողնես Հիսուսի հետ կապված այդ ամենը, ինչի մասին խոսում էիր»:

Այս անհամաձայնությունը նույնպես կարող է լինել Աստծո՝ քո ուշադրությունը գրավելու ձևը, որպեսզի տեսնես, որ կարիք կա քո ընկերների հետ կապված ինչ-որ փոփոխություններ անել:

4. Մենք հավաքվում ենք մեկտեղ՝ օգնելու մեկս մյուսին:

Աստված խոստանում է օգտագործել այն հավատացյալներին, ովքեր նվիրվում են Իրեն: Նա խոստանում է յուրաքանչյուր քրիստոնյայի տալ հատուկ ունակություններ և պարգևներ՝ Իր գործի մասին հոգ տանելու համար: Աստված ուզում է, որ մենք օգտագործենք այս պարգևներն իրար օգնելու հարցում: Որոշ պարգևներ գերբնական արտաքին ունեն, օրինակ՝ հրաշքներ գործելու կարողությունը: Բայց կան պարգևներ էլ, որոնք բնական արտաքին ունեն, օրինակ՝ մարդկանց օգնելը: Բայց և այնպես, բոլոր պարգևները գերբնական են, քանի որ Աստված է դրանք տալիս մեզ:

Տեղական եկեղեցին պետք է լինի մի վայր, որտեղ հավատացյալները սովորում են, թե ինչպես օգնեն մեկմեկու: Դա պետք է լինի մի վայր, որտեղ հավատացյալները վարժվում են և առաջնորդվում՝ Քրիստոսի Խոսքով մարդկանց հետ (թե՛ հավատացյալների, թե՛ ոչ հավատացյալների) կիսվելու նպատակով:

Ամբողջացնելով ասենք, որ երբ տեղական եկեղեցին իրականացնում է այս չորս գործողությունները, ապա կարող ենք վստահ լինել, որ Աստված ուրախ է, և որ Աստծո գործը առաջ կգնա ու կհասնի իր ավարտին: Այս գործողություններն անող տեղական եկեղեցին կլինի «առողջ» և հետաքրքիր: Դու ուրախ կլինես, որ այդ եկեղեցու մի մասնիկն ես: Այն տեղական եկեղեցին, որն այս ամենը չի անում, «մեռած» է: Մարդիկ կձանձրանան և կկորցնեն իրենց հետաքրքրությունը եկեղեցու գործունեության հանդեպ:

Քեզ համար կարևոր է՝ հնարավորինս շուտ ներգրավվել տեղական եկեղեցու մեջ: Դու մյուս հավատացյալների հետ ընկերանալու կարիքն ունես: Դու Աստծո Խոսքի ուսուցումների կարիքն ունես: Դու հնարավորություն ունենալու կարիքն ունես, որով մարդկանց կտաս այն, ինչ Աստված է քեզ տվել: Դու պետք է ներգրավվես Աստծո գործի մեջ:

Գլուխ 2

Ինչպե՞ս վկայություն տալ

Ա. Ի՞նչ է վկայությունը:

Վկայությունն ականատեսի փոխանցած փաստերն են: Այս գլխում մենք կքննարկենք, թե ինչպես պետք է վկայություն տալ, որը կապ ունի հավատացյալ լինելու հետ: Այս համատեքստում վկայություն նշանակում է՝ «Կիսվել մարդկանց հետ, թե ինչ է արել աՔրիստոսը քո կյանքում»:

Բ. Ինչո՞ւ ես պետք է վկայեմ:

Եթե Աստված օգնել է քեզ և փոխում է քո կյանքը, դու պետք է մարդկանց պատմես այդ մասին: Վկայություն տալը կարող է լինել ոչ պաշտոնական: Օրինակ, երբ դու քո ընտանիքի անդամներից մեկի հետ կիսվում ես, թե ինչ է հիմա անում Աստված քո կյանքում: Այնուամենայնիվ, դու կարող ես հնարավորություն ունենալ՝ պաշտոնական ձևով կիսվել քո վկայությամբ, ասենք՝ եկեղեցում կամ դպրոցական ժողովի ժամանակ: Ահա մի քանի պատճառներ, թե ինչու է անհրաժեշտ մարդկանց հետ կիսվել սեփական վկայությամբ.

1. Դա ինձ հնարավորություն է տալիս հնազանդվել Քրիստոսին (Մատթեոս 28:19-20):
2. Դա ինձ հնարավորություն է տալիս ամրացնել իմ հավատը և վստահությունն Աստծո հանդեպ: Դա ինձ օգնում է ավելի ուժեղ քրիստոնյա լինել:
3. Դա ինձ հնարավորություն է տալիս բացահայտ դավանել Աստծուն (Գործք. 5:29):
4. Դա ինձ հնարավորություն է տալիս օգնել մյուսներին: Դա կարող է մարդկանց օգնել, որպեսզի Աստծուն ներգրավեն իրենց կյանքում:
5. Դա ինձ հնարավորություն է տալիս փառավորել Աստծուն, որպեսզի Նա մեծարվի իմ կյանքի փոփոխությունների համար:
6. Դա ինձ հնարավորություն է տալիս հաղթել սատանային (Հայտ. 12:11):

Գ. Լավ վկայության հիմնական հատկանիշները:

Այս ձեռնարկի 14-րդ էջում կա լրացուցիչ տեղեկություն առ այն, թե ինչ ներառես, երբ *քո կյանքից վկայություն* ես տալիս: Քո վկայությամբ կիսվելիս դու հաճախ ներառում ես դրվագներ քո անցյալի մեղսալից կյանքից:

Խնդրում եմ՝ հասկացի՛ր, որ այն, ինչ քննարկվում է այս հատվածում, խոսում է բազմաթիվ հնարավորությունների մասին, որոնք դու կունենաս, երբ մարդկանց հետ կիսվես նրանով, թե ինչ է Աստված հիմա անում քո կյանքում:

Պարտադիր չէ, որ քո բոլոր վկայություններում քո անցյալի մեղսալից կյանքից դրվագներ ներառես: Դու պետք է կենտրոնանաս այն բանի վրա, որ կիսվես, թե ինչ է արել քո կյանքում Աստված, ոչ թե՝ ինչ էր արել անցյալում սատանան:

Երբ դու հնարավորություն կունենաս մարդկանց հետ քո վկայությամբ կիսվելու, առաջարկում ենք չորս գործողություններ, որոնք կարող ես ներառել քո վկայության մեջ: Դրանք են.

1. Պատմի՛ր քո կյանքի մի ասպարեզի մասին, որտեղ Աստված քեզ օգնում է աճել:
2. Հիշեցրո՛ւ Աստվածաշնչյան մի համար, որը քեզ օգնել է աճել այդ ասպարեզում: Եթե անգիր գիտես այդ համարը, արտասանի՛ր այն: Հակառակ դեպքում՝ այն կարդա՛ Աստվածաշնչից:
3. Պատմի՛ր, թե ինչպես ես դու օգտագործել այդ համարը քո կյանքի տվյալ ասպարեզում քեզ օգնելու համար: Մի՛ քարոզիր: Բացատրի՛ր պարզ, գործնական ձևով, թե ինչպես է այդ համարը քեզ օգնել: Նկարագրի՛ր, թե ինչ կապ ունի այդ համարը քո կյանքի այն ասպարեզի հետ, որտեղ Աստված օգնել է քեզ աճել:
4. Վերջին մի քանի օրերից կոնկրետ օրինա՛կ բեր, թե ինչպես ես դու այդ համարն օգտագործել: Աստծո՛ւն տուր փառքը, որ քեզ օգնել է աճել:

Երբեմն դժվար է թարմ մտքեր ունենալ՝ վկայության մեջ օգտագործելու համար: Հետևյալ աղյուսակը կարող է այդ հարցում քեզ օգնել:

Կյանքից կյանք սովորելու պատկեր

1. **Գրի՛ր սթրեսային իրավիճակներ:**
   Գրել այն սթրեսային իրավիճակները, երբ դու հեշտությամբ ես նյարդայնանում, հուսահատվում, բարկանում, սրտնեղվում, ընկճվում կամ ճնշվում:

2. **Հարցրո՛ւ Աստծուն.**
   «Աստվա՛ծ իմ, ի՞նչ ես ուզում ինձ սովորեցնել, որ ես **անեմ այսօր**»:
   Փորձի՛ր տվյալ իրավիճակին նայել Աստծո տեսանկյունից:

3. **Քո կյանքում գտի՛ր մի ասպարեզ, որտեղ դու ուզում ես աճել:**
   Տե՛ս 1-ին կետի տակ քո գրածներին: Եթե դժվարանաս գտնել, թե որ ասպարեզներում կարիք ունես գործելու, տե՛ս Ա Կորնթացիներին 13:4-8-ում նշվածները:

4. **Կապի՛ր սա Աստվածաշնչի քո ուսումնասիրության հետ:**
   Ի՞նչ ունի Աստվածաշունչը քեզ ասելու քո կյանքի այս ասպարեզի վերաբերյալ, որտեղ դու ուզում ես աճել:

5. **Գրի՛ր գործողություններ, որոնք դու կարող ես ավարտել այսօր:**
   Նպատակնե՛ր դիր: Գրի՛ր գործողություններ, որոնք դու կարող ես կատարել: Անձա՛մբ կիրառիր այն ամենը, ինչ տվյալ համարն է քեզ ասում, որ անես: Ընտրի՛ր մի նպատակ, որը դու կիրականացնես հենց այսօր:

6. **Գնահատի՛ր արդյունքները:**
   Ավելի ուշ՝ նույն կամ հաջորդ օրը, վերանայի՛ր, թե ինչ տեղի ունեցավ, երբ դու փորձեցիր հասնել քո դրած նպատակին: Նկարագրի՛ր իրավիճակը և բացատրի՛ր, թե ինչպես քո նպատակադրվածությունը քեզ օգնեց (կամ չօգնեց) տվյալ համարը կիրառել քո կյանքում:

Դ. Լրացուցիչ օգնություն:

1. Քո վկայությունը թող լինի հինգ րոպեից պակաս:

Ոմանց համար հեշտ է մարդկանց առաջ կանգնել ու վկայություն տալ: Ըստ էության՝ դու խոսում ես քո մասին, և թե ինչ է Աստված արել քո կյանքում: Քեզ համար շատ հետաքրքիր լինելով հանդերձ՝ լսողների համար կարող է ձանձրալի լինել, եթե այն չափազանց երկար լինի, դրա համար քո վկայությունը պետք է հինգ րոպեից պակաս տևի: Պլանավորի՛ր՝ այդ ժամանակը հավասարապես բաշխել քո վկայության չորս մասերի միջև (դրա վերաբերյալ բացատրությունը սույն Ուսանողի ձեռնարկի 9-10-րդ էջերում է՝ Գ. կետի ներքո):

2. Ծրագրի՛ր, թե ինչ ես ասելու քո վկայության մեջ:

Որոշ մարդիկ ասում են. «Ես ոչ մի բան էլ չեմ ծրագրի: Երբ ոտքի կանգնեմ, Սուրբ Հոգին ինձ կհուշի, թե ինչ ասեմ»:

Վկայություն տալու ավելի լավ ձև կա: Թո՛ւյլ տուր Սուրբ Հոգուն, որ քեզ օգնի, երբ դու ծրագրես քո վկայությունը:

3. Այնպե՛ս արա, որ քո ողջ վկայությունն Աստծուն փառք բերի:

Հստակ նշի՛ր, որ Աստված է քեզ Իր զորությամբ փոխել: Այնպիսի տպավորություն մի՛ ստեղծիր, որ կարծես դու ես այդ ամենն արել: Հիսուսն ասաց՝ «Առանց Ինձ ոչինչ չեք կարող անել»: Հիշի՛ր դա: Երբ վկայում ես, մի՛ փառավորիր քեզ և մի՛ փառավորիր մեղքը:

4. Սուրբ Հոգուն խնդրի՛ր, որ օգնի քեզ՝ ճիշտ բաներ ասել:

Պատճառներից մեկը, թե ինչու ենք մենք վկայություն տալիս, մարդկանց օգնելն է: Սակայն մենք չենք կարող մարդկանց օգնել, եթե պարզապես մեր ուզածն անենք: Միայն այն ժամանակ, երբ Սուրբ Հոգին օգտագործի քո ասածները, քո վկայությունն իրական արժեք կունենա: Զգայո՛ւն եղիր Սուրբ Հոգու հանդեպ: Աղոթի՛ր և խնդրի՛ր, որ Նա քեզ առաջնորդի՝ ասել այն, ինչ Նա է ուզում, որ դու ասես:

Ե. Տալ սեփական կյանքի վկայությունը:

Դու, հնարավոր է, առիթ ունենաս պատմել մարդկանց քո անցած կյանքի մասին և՝ թե ինչպես ես դարձել ճշմարիտ քրիստոնյա: Աստված շատ անգամ նման վկայություններն օգտագործում է՝ ճշմարիտ քրիստոնյա դառնալու կարևորությունը մարդկանց ցույց տալու համար:

Այս տեսակի վկայությունները կարող են նաև սխալ օգտագործվել: Երբեմն մարդիկ սկսում են պարծենալ իրենց անցյալով և արդյունքում փառք են բերում իրենց, ոչ թե Աստծուն:

Դու քո կյանքի վկայությամբ մարդկանց հետ կիսվելու հնարավորություն ես ստանում, այդ դեպքում առաջարկում ենք քո կյանքից բերել չորս հանգամանքներ, որոնց շուրջ դու կարող ես խոսել նրանց հետ.

1. Պատմի՛ր մեղքի հետևանքների մասին:

Քո կյանքից միայն *մեկ* օրինակ բեր՝ նկարագրելու համար մեղքի հետևանքները: Պատմի՛ր, թե ինչը պատճառ հանդիսացավ, որ դու ունենաս այդ խնդիրը (ո՞րն էր խնդրի պատճառը): Կոնկրե՛տ եղիր, բայց մի՛ պարծեցիր մեղքի համար:

Այնպես մի՛ ներկայացրու քո անցյալը, որ կարծես այն ավելի հետաքրքիր էր, քան ճշմարիտ քրիստոնյա լինելը: Բացատրի՛ր, թե ինչպես էր մեղքը կործանել քո կյանքը և խանգարել քեզ՝ վայելելու իրական խաղաղությունն ու ուրախությունը: Քո ողջ ժամանակը մի՛ անցկացրու անցյալի այս հատվածի վրա: Այնպե՛ս արա, որ ժամանակդ հավասարապես բաշխես քո վկայության նաև մյուս երեք բաժինների վրա:

2. Պատմի՛ր, թե ինչպես ես դու հասել այդտեղ և դարձել ճշմարիտ քրիստոնյա:

Կիսվի՛ր այն ամենի մասին, որոնք քեզ օգնեցին դառնալ ճշմարիտ քրիստոնյա: Համոզվի՛ր, որ քեզ լսողները հասկանում են, որ Քրիստոսը փրկել է քեզ:

3. Պատմի՛ր, թե ինչպես է քո կյանքը փոխվել ճշմարիտ քրիստոնյա դառնալուց ի վեր:

Մի՛ ասա. «Աստված ինձ օգնել է, որ լուծեմ իմ բոլոր խնդիրները»: Մեկ կոնկրետ օրինա՛կ բեր, թե ինչպես է Աստված քեզ օգնել ճշմարիտ քրիստոնյա դառնալուց ի վեր: Դու կարող ես կիսվել աստվածաշնչյան այն համարով, որը քեզ օգնել է: Սակայն մի՛ փորձիր քո վկայության ընթացքում մի փոքրիկ քարոզ տալ: Թող քարոզիչները քարոզեն: Դու պարզապես պետք է կիսվես, թե ինչ է Աստված արել և անում քո կյանքում:

4. Պատմի՛ր նրանց քո ապագա ծրագրերի ու նպատակների մասին:

Դու կարող ես քո վկայությունը եզրափակել՝ կիսվելով նրանց հետ քո նպատակներով ու ծրագրերով: Խնդրի՛ր նրանց՝ աղոթել քեզ համար: Ասա՛ նրանց, որ ուզում ես բացահայտել Աստծո կամքը քո կյանքի համար, որ ուզում ես անել այն, ինչ Նա է կամենում, որ անես: Քո վկայության այս հատվածը կարող է շատ կարճ լինել:

Գլուխ 3

Ինչպես լինել Աստծո տնտես

Երբ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա, նոր փոխհարաբերություններ ես սկսում Աստծո հետ: Դու դառնում ես Աստծո որդի (Հովհաննես 1:12): Աստված գալիս է և ապրում քո մեջ (Հովհաննես 14:17,23): Մենք դառնում ենք Աստծո ընկերը: Մենք սովորում ենք զգալ և ստանալ Նրա սերը: Շատ չանցած՝ մենք սովորում ենք մեր սերն արտահայտել Նրա հանդեպ: Մենք սկսում ենք տեսնել, որ Աստված պատասխանում է մեր աղոթքներին:

Մեկ այլ կարևոր փոփոխություն, որ պետք է տեղի ունենա մեր կյանքում, կապված է Աստվածաշնչի հետ: Մենք կարիք ունենք ամեն օր Աստվածաշունչն ուսումնասիրելու և տեսնելու, թե ինչ է Աստված ասում կյանքում մեզ հանդիպող խնդիրների ու մարտահրավերների մասին: Մենք պետք է սկսենք կիրառել այդ նոր արձագանքները մեր առօրյա կյանքում: Մենք իրավիճակներին պետք է արձագանքենք Աստծո ուզած ձևով:

Ի՞նչ է Աստված քեզ տվել, որ այսօր տնօրինես: Աստծո հետ մեր փոխհարաբերությունների առանցքային մասերից մեկը ներառում է այն ամենը, որ Աստված տալիս է մեզ: Աստծո տված բոլոր լավ բաների հետ մենք նաև որոշակի պատասխանատվություն ենք ստանձնում: Մենք կարող ենք ասել, որ բոլորս էլ Աստծո տնտեսներ ենք: Նա մեզ շատ բաներ է տվել: Հիմա մենք Աստծո տվածները շատ լավ ձևով տնօրինելու պատասխանատվություն ունենք: Մենք պետք է սովորենք իմաստուն կերպով օգտագործել Նրա տված պարգևները:

Ա. Ի՞նչ է տնտեսը:

Ուրեմն, ի՞նչ է տնտեսը:

1. Տնտեսը մի անձնավորություն է, ում վարձում են, որ տնօրինի ինչ-որ մեկի ունեցվածքը կամ գումարը:

2. Տնտեսը սեփականատերը չէ: Տնտեսն աշխատում է սեփականատիրոջ համար:

3. Յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյա Աստծո համար տնտես է: Լինել ճշմարիտ քրիստոնյա նշանակում է, որ Աստված իմ կյանքի Առաջնորդն է: Նա իմ սեփականատերն է, սակայն ես խամաճիկ կամ ռոբոտ չեմ: Աստված ակնկալում է, որ ես հասարակության մեջ ինձ կդրսևորեմ որպես ճշմարիտ քրիստոնյա:

Աստծո համար տնտես լինելը լոկ մի քանի հավատացյալների համար չէ: Աստված ուզում է, որ Իր բոլոր զավակները լավ տնտեսներ լինեն:

Բ. Ի՞նչ է Աստված ինձ տվել, որ տնօրինեմ:

1. Ժամանակ:

Եթե քեզ 86,400 դոլար գումար տային, որ դու այն հենց այսօր ծախսեիր, ինչպե՞ս կծախսեիր: Ենթադրենք՝ քեզ ամեն օր են տալիս այդ նույն գումարը՝ պայմանով, որ պետք է վերադարձնես այն քանակը, որն այդ օրը չես ծախսել: Ինչքա՞ն լավ կկարողանայիր այդ գործն անել՝ ամեն օր այդքան գումար տնօրինելով:

Աստված քեզ 86,400 վայրկյան է տվել, որ ամեն օր ծախսես: Քո ժամանակն ամենամեծ արժեքներից մեկն է, որ Աստված տվել է քեզ: Ինչքանո՞վ ես դու լավ տնօրինում քո ժամանակը:

2. Փող:

Մարդկանց մեծ մասը հնարավորություն չունի ամեն օր $86,400 ծախսել: Սակայն, եթե անգամ մի քանի դոլար ունես, դու պատասխանատվություն ունես դրանք Աստծուն հաճելի ձևով ծախսելու: «Ես իմ ամբողջ փողը պետք է տամ Աստծո՞ւն»: Ոչ, բայց Բ Կորնթացիներին 9:7-ը մեզ լավ խորհուրդներ է տալիս, թե ինչպես օգտագործենք մեր փողը:

Բ Կորնթացիներին 9:7.

«Ամեն մեկը, ինչպես սրտով հոժար է, թող այնպես տա, ոչ թե խնայողաբար կամ հարկադրաբար, քանի որ Աստված սիրում է ուրախությամբ տվողին»:

Մեզնից շատերը հավանաբար կցանկանային ավելի շատ փող ունենալ, քան ունեն այսօր: Բայց Աստված ուզում է, որ մենք ապացուցենք, թե որքան լավ ենք կարողանում տնօրինել այն, ինչ արդեն ունենք: Եթե ապացուցենք, որ փոքրիկ գումարը կարողանում ենք լավ տնօրինել, ապա նա մեզ տնօրինելու համար ավելի մեծ գումար կտա:

3. Սուրբ Հոգու պարգևներ:

Սուրբ Հոգին շատ պարգևներ ունի, որ ցանկանում է տալ Իր զավակներին: Նա այդ հարցում շատ ուշադիր է: Աստվածաշնչյան մի քանի հատվածներ թվարկում են այդ պարգևները. Ա Կորնթացիներին 12, Հռոմեացիներին 12, Ա Պետրոս 4 և Եփեսացիներին 4:

4. Ընտանիք և փոխհարաբերություններ:

Ի՞նչ կապ ունի Աստծո համար տնտես լինելն իմ ընտանիքի հետ, հատկապես, եթե ես նրանց հետ չեմ ապրում: Սակայն մենք առիթներ ենք ունենում նրանց հետ շփվելու: Աստված մեզ տալիս է պատասխանատվություններ ընտանեկան փոխհարաբերությունների վերաբերյալ:

5. Աշխատանք:

Դու սիրո՞ւմ ես քո աշխատանքը, թե՞ ատում ես այն: Քեզ դո՞ւր է գալիս աշխատել: Ինչպե՞ս դու կգնահատեիր քո վերաբերմունքն աշխատանքի հանդեպ: Սա մեկ այլ կարևոր ասպարեզ է մեր առօրյա կյանքում, որտեղ մենք կարող ենք ցույց տալ, թե որքանով ենք լավ տնտեսներ հանդիսանումԱստծո համար:

Կողոսացիներին 3:23-24.

«Եվ ինչ որ անեք, սրտա՛նց արեք, որպես թե Տիրոջ համար և ոչ թե՝ մարդկանց. իմանալով, որ ժառանգության հատուցումը Տիրոջից եք ստանալու, որովհետև Տեր Քրիստոսին եք ծառայում»:

Գ. Ի՞նչն է մարդուն դարձնում լավ տնտես Աստծո համար:

1. Հավասարակշռված աճը:

Հավասարակշռված աճը լավ տնտեսի կարևոր հատկանիշներից մեկն է: Աստված ուզում է մեր կյանքում անձնական աճ տեսնել: Նա նաև ուզում է աճ տեսնել մարդկանց հետ գործելու մեջ: Մենք պետք է հասնենք մարդկանց և օգնենք նրանց: Քրիստոնեական ծառայության համար բազմաթիվ հնարավորություններ կան, որտեղ բանալին հավասարակշռությունն է:

2. Լավ տնտեսը սովորում է բաշխել պատասխանատվությունները:

Լավ տնտեսը նա չէ, ով փորձում է ամեն բան միայնակ անել: Դու պետք է սովորես կիսել պատասխանատվություններն ու աշխատանքը մարդկանց հետ: Աստված ուզում է, որ նորադարձ քրիստոնյաներն ակտիվորեն ներգրավվեն տեղական եկեղեցում: Մենք պետք է սովորենք քայլել մյուս հավատացյալների հետ միասին:

3. Աստված է իմ Տերն ու իմ Առաջնորդը:

Եթե ուզում ես գերազանց տնտես լինել, ավելի լա՛վ ճանաչիր Աստծուն: Նա սիրում է քեզ և ցանկանում է քեզ հետ մտերիմ ընկեր լինել: Ինչքան մտերիմ ես Աստծո հետ, այնքան հեշտ է հասկանալը, թե ինչ է Նա ուզում, որ դու անես:

4. Սերը շատ մեծ տեղ ունի Աստծո համար գերազանց տնտես լինելու մեջ:

Հետաքրքիր է աշխատել Աստծո այն տնտեսների հետ, ովքեր սեր են ցույց տալիս մարդկանց հանդեպ: Կողոսացիներին 3-րդ գլուխը առաջարկությունների մի ամբողջ ցանկ է ներկայացնում, որոնք կարող են քեզ օգնել լավ տնտես լինելու հարցում:

Կողոսացիներին 3:14.

«Եվ այս բոլորի վրա հագեք սերը, որ կատարելության կապն է»:

5. Հավատարմություն:

Գերազանց տնտեսի մեկ այլ հատկանիշ է հավատարմությունը: Հավատարիմ լինել նշանակում է՝ լինել կայուն և նվիրված:

Ա Կորնթացիներին 4:2.

«Արդ, տնտեսներից պահանջվում է, որ հավատարիմ լինեն»:

Շատ անգամ իրավիճակի ամենահեշտ լուծումը հուսահատվելն ու հանձնվելն է: Սակայն լավ տնտեսները հավատարիմ են: Նրանք վստահելի են: Նրանք ավարտին են հասցնում այն գործը, որն Աստված տվել է իրենց:

Բ Կորնթացիներին 8:11.

«Արդ, ավարտին հասցրեք սա, որպեսզի ինչպես հոժարությամբ սկսել եք, այնպես էլ ձեր ունեցածի չափով կատարեք»:

6. Հնազանդություն:

Հնազանդությունը մի կենսակերպ է, որը բնութագրում է Աստծո լավ տնտեսին: Հնազանդությունը ներառում է Աստծո օրենքները, ինչպես նաև՝ մարդկային օրենքները:

Դ. Ինչպե՞ս կարող եմ ցույց տալ, որ Աստծո համար լավ տնտես եմ:

1. Իմ ժամանակը:

ա. Կիրակին դարձրո՛ւ հատուկ օր: Շաբաթվա մեջ մեկ օր հատկացրո՛ւ Աստծուն երկրպագելու և քո եկեղեցու մյուս հավատացյալների հետ հաղորդակցվելու համար (Ելից 20:8-10):

բ. Ամեն օր անձնական պաշտամունքի ժամանա՛կ հատկացրու: Ժամանա՛կ հատկացրու Աստվածաշնչի ընթերցանության և աղոթքի համար:

գ. Ժամանա՛կ տուր քրիստոնեական աշխատանքի համար: Մատթեոս 25:31-46-ում թվարկված են մի քանի ձևեր, թե ինչպես կարող ես ներգրավվել քրիստոնեական աշխատանքի մեջ:

դ. Ժամանա՛կ հատկացրու մարդկանց վկայելու համար: Պատմի՛ր նրանց քո ունեցած նոր կյանքի մասին:

2. Իմ աշխատանքը:

ա. Աշխատի՛ր, որպեսզի ապահովես ինքդ քեզ և քո ընտանիքը:

Աստվածաշունչը մի քանի հատուկ ցուցումներ է տալիս տան տղամարդկանց ու հայրերին՝ կապված այս ասպարեզում նրանց պատասխանատվությունների հետ:

Ա Տիմոթեոս 5:8.

«Բայց եթե մեկը յուրայինների, հատկապես իր ընտանիքի մասին չհոգա, նա հավատն ուրացել է և անհավատից վատ է»:

Աստված շատ հստակ շարադրում է տան տղամարդու կամ հոր պարտականությունները: Նույնիսկ եթե դու երբևէ չես ամուսնացել քո երեխաների մոր հետ, դու, միևնույն է, այդ երեխաներին ապահովելու պարտավորություն ունես: Նույնն է նաև ամուսնալուծության դեպքում. դու շարունակում ես պարտավորություններ ունենալ քո երեխաներին ու նախկին կնոջն ապահովելու հարցում:

Աստված հավատացյալների համար բարեգործական ծրագիր չունի, որ նրանք նստեն, ոչինչ չանեն, իսկ Աստված նրանց փող ուղարկի: Աստված այսպես չի գործում: Նա ակնկալում է, որ մենք աշխատենք և աշխատելիս անենք մեր լավագույնը:

Կողոսացիներին 3:23	Ա Թեսաղոնիկեցիներին 4:11
Բ Թեսաղոնիկեցիներին 3:10	Բ Կորնթացիներին 8:11

բ. Տնային գործեր:

Աստված ուզում է, որ դու հոգ տանես քո բնակարանի, առանձնատան կամ սենյակի համար: Եթե դու ամուսնացած ես, և տան տղամարդն ես, պատասխանատվություն ունես տան առաջնորդը լինելու: Մի՛ սպասիր, որ կինդ անի տնային բոլոր գործերը: Պատրաստակա՛մ եղիր օգնելու նրան այն ամենով, ինչ կարող ես: Կարևոր է, որ քո երեխաները տեսնեն, որ դու աշխատում ես: Նրանք սովորում են ըստ օրինակի: Այնպե՛ս արա, որ քո երեխաները լավ օրինակ վերցնեն քեզնից:

3. Իմ ունեցվածքը (փողը և սեփականությունը):

ա. Տո՛ւր Աստծուն:

Տո՛ւր Աստծուն, որպեսզի օգնես առաջ տանել Նրա գործն այստեղ՝ երկրի վրա: Մի՛ փորձիր կառուցել քո սեփական «ամրոցը»: Զոհաբերի՛ր Աստծո գործի համար և կտեսնես, որ Նա օրհնում է քեզ: Շատ հավատացյալներ իրենց եկամտի առնվազն տասներորդ մասը տալիս են Աստծուն: Սա՝ եկամտի 10%-ը, կոչվում է տասանորդ: Տե՛ս Մաղաքիա 3:7-10-ը:

բ. Տո՛ւր կարիքավորներին:

Մենք պետք է օգնենք մարդկանց, որովհետև սիրում ենք օգնել, ոչ թե՝ որ ստիպված ենք դա անել:

Ղուկաս 6:38	Գաղատացիներին 6:7-10
Բ Կորնթացիներին 8:9	Ա Հովհաննես 3:17-18

գ. Քո ունեցվածքի սեփականության իրավունքը տո՛ւր Աստծուն:

Այն ամենը, ինչ դու ունես, Աստված է քեզ տվել: Որոշո՛ւմ կայացրու քո ողջ ունեցվածքի և փողի սեփականության իրավունքը տալ Աստծուն:

Աստված մեզնից ամեն մեկին տարբեր ընդունակություններ է տվել: Մենք բոլորս պարտավոր ենք մեր կարողացածի չափով զարգացնել և օգտագործել այդ ընդունակությունները:

Ե. Իմ վերաբերմունքն է ցույց տալիս, թե արդյո՞ք ես գործում եմ որպես Աստծո տնտես:

Միայն արարքները բավարար չեն՝ ապացուցելու, որ ես գործում եմ որպես Աստծո տնտես: Դա շատ ավելի խորն է, քան երևացող արարքները: Իմ սրտի դրդապատճառներն են ցույց տալիս, որ ես Աստծո տնտես եմ:

1. Քո դրդապատճառը սե՞րն է:

Աստված ուզում է, որ դու Իրեն ծառայես, քանի որ սիրում ես Իրեն: Աստված տեսնում է, թե արդյո՞ք սերն է քո արարքների դրդապատճառը: Սերն ամուր հիմք է ապահովում Աստծո համար լավ տնտես լինելու հարցում:

2. Դու ուզո՞ւմ ես տնտես լինել Աստծո համար:

Բ Կորնթացիներին 9:7.

«Ամեն մեկը, ինչպես սրտով հոժար է, թող այնպես տա, ոչ թե խնայողաբար կամ հարկադրաբար, քանի որ Աստված սիրում է ուրախությամբ տվողին»:

Եթե դու որոշես Աստծո համար տնտես լինել, ապա արա՛ դա այն պատճառով, որ ուզում ես: Աստված քեզ չի հարկադրում որևէ բան անել: Նա այդ ձևով չի գործում: Նա քեզ չի նայում որպես Իր ստրուկի: Նա քեզ նայում է որպես Իր երեխայի: Սակայն Աստված Իր երեխաների հետ վարվում է նաև որպես մեծահասակների: Նա մեզ ազատություն է տալիս, բայց դրա հետ գալիս է նաև պատասխանատվություն:

3. Իսկ Աստծո օրե՞նքը:

Որոշ քրիստոնյաներ Աստծո հետ իրենց փոխհարաբերության մեջ շատ օրինապաշտ են: Նրանք Աստվածաշնչում միայն օրենքներ են փնտրում: Նրանք մտածում են, որ ճշմարիտ քրիստոնյա լինել նշանակում է՝ ենթարկվել այդ բոլոր օրենքներին: Նրանք ասում են. «367-րդ օրենքն ասում է, որ պետք է Աստծո տնտես լինեմ, ինձ թվում է՝ ես դա էլ կանեմ»:

Աստված ուզում է, որ դու ծառայես Նրան, որովհետև սիրում ես Նրան և ուզում ես Նրա զավակը լինել:

Աստվածաշունչը հստակ նկարագրում է, թե ինչ է մեղքը: Մենք պետք է որոշում կայացնենք՝ ամեն օր հնազանդվել Աստծուն: Ճիշտ որոշումներ կայացնելը միշտ չէ, որ հեշտ է, և երբեմն մենք սխալվում ենք: Սակայն Աստված շարունակում է մեզ սիրել, պատրաստ է ներել մեզ և օգնել, որպեսզի աճենք և ավելի ուժեղ դառնանք՝ դիմագրավելու համար հաջորդ մարտահրավերին:

Աստծուն հնազանդվելու թեման ավելի մանրամասն քննարկված է *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացի՝ *Հնազանդություն Աստծուն* բաժնում:

Զ. Աստծո տնտես լինելու արդյունքները:

Ահա Աստծո տնտես լինելու մի քանի արդյունքներ.

1. Աստված կապահովի քո բոլոր *կարիքները* (ոչ թե ցանկությունները):

   Ղուկաս 6:38

   Բ Կորնթացիներին 9:8

   Փիլիպպեցիներին 4:19

2. Աստված քեզ հավիտենական կյանք կտա:

   Մատթեոս 25:31-46

3. Աստված քեզ ավելի շատ պատասխանատվություններ կվստահի:

   Ղուկաս 16:10

Գլուխ 4

Հաղորդություն

Ա. Ի՞նչ է նշանակում «հաղորդություն»:

Շատ եկեղեցիներ հաղորդությունը պարբերաբար անում են որպես իրենց եկեղեցական ծառայության մի մաս: Եկեղեցական ծառայության այս մասը շատ յուրահատուկ իմաստ ունի և կապված է Հիսուսի մահվան հետ:
Սակայն «հաղորդությունը» տարբեր իմաստներ ունի, և դրանք հատուկ իմաստ ունեն քրիստոնյայի համար, այն է՝

1. կիսվել,
2. եկեղեցական յուրահատուկ ծառայություն:

Եկեղեցական այս յուրահատուկ ծառայությանը տարբեր անուններ են տրվել.

ա. Սուրբ հաղորդություն:

բ. Տիրոջ ընթրիք:

գ. Վերջին ընթրիք:

դ. Հաղորդության ծառայություն:

Այս գլխում մենք կկենտրոնանանք հաղորդության յուրահատուկ ծառայության վրա, որն այսօր օգտագործվում է եկեղեցիներում: Ա Կորնթացիներին 11:23-34-ում Պողոսը մանրամասնորեն նկարագրում է հաղորդության ծառայության իմաստն ու նպատակը:

Բ. Ի՞նչ հատուկ բաներ են օգտագործվում հաղորդության ծառայության ժամանակ:

1. Հաց (Ա Կորնթացիներին 11:23-24):

   Հացը խորհրդապատկերում է Հիսուսի մարմինը: Նրա մարմինը ծեծվեց ու խոշտանգվեց, որպեսզի մենք բժշկվենք (տե՛ս Եսայի 53:5):

2. Գինի կամ խաղողի հյութ (Ա Կորնթացիներին 11:25):

   Գինին կամ խաղողի հյութը խորհրդապատկերում են Հիսուսի արյունը: Նա Իր կյանքը տվեց մեզ, որպեսզի մենք ազատվենք մեղքի պատժից: Շատ եկեղեցիներ խաղողի հյութ են օգտագործում, որպեսզի ալկոհոլի դեմ պայքար ունեցող մարդիկ գայթակղություն չունենան նորից խմելու:

Գ. Ինչո՞ւ ենք մենք հաց և գինի օգտագործում հաղորդության ծառայության ժամանակ:

1. Որպեսզի Հիսուսի մահն ավելի իրական դարձնենք մեզ համար:

2. Հացն ու գինին առարկայական դասեր են մեզ համար: Դու տեսնում ես դրանք, շոշափում և զգում դրանց հոտն ու համը: Այս առարկաները մեզ օգնում են, որ մտովի տեսնենք Հիսուսի մահվան իրականությունը:

Դ. Ինչո՞ւ ենք մենք հաղորդություն անում:

1. Պաշտենք Աստծուն (Ա Կորնթացիներին 11:24-26):

2. Հիշենք, որ Հիսուսը մահացել է մեզ համար (Ա Կորնթացիներին 11:24-25):

3. Հիշեցնենք մեզ, որ սպասենք Հիսուսի երկրորդ գալուստին (Ա Կորնթացիներին 11:26):

4. Մեզ հնարավորություն տանք՝ նայելու մեր ներսը (քննելու մեր կյանքը) (Ա Կորնթացիներին 11:27-32):

   ա. Խոստովանենք մեր մեղքերն Աստծուն:

   բ. Տեսնենք, թե արդյո՞ք հասել ենք մեր նպատակներին:

5. Օգնենք մեզ, որ նայենք մարդկանց հետ ունեցած մեր փոխհարաբերություններին (Ա Կորնթացիներին 11:29):
   ա. Ներողություն խնդրենք, եթե ինչ-որ մեկին վիրավորել ենք կամ վնաս տվել:
   բ. Քաջալերենք միմյանց:
   գ. Շնորհակալություն հայտնենք մարդկանց մեր հանդեպ արած լավ բանի համար:

«Տիրոջ մարմինը» (Ա Կորնթացիներին 11:29-ում) արտահայտությունը վերաբերում է քո տեղական եկեղեցու հավատացյալներին: Այստեղ չի խոսվում Հիսուսի ֆիզիկական մարմնի մասին, որ Նա ուներ, երբ այստեղ էր՝ երկրի վրա: Տե՛ս նաև Ա Կորնթացիներին 12:12-31-ը:

Գլուխ 5

Ջրի մկրտություն

Այս գլխում մեր նպատակն է՝ բացատրել ջրի մկրտության իմաստը, և թե ինչու է այն կարևոր նորադարձ քրիստոնյայի համար: Ջրի մկրտությունը մարդուն ճշմարիտ քրիստոնյա չի դարձնում:

Ջրի մկրտությունը նշան է կամ խորհուրդ՝ ցույց տալու համար, որ մկրտվողի կյանքում հոգևոր փոփոխություն է տեղի ունեցել: Դրանով աշխարհին ասում են, որ ճշմարիտ քրիստոնյա են դարձել:

Ա. Ջրի մկրտության հոգևոր իմաստը:

Հռոմեացիներին 6:1-10-ում և Գաղատացիներին 2:20-ում Պողոսը նկարագրում է ջրի մկրտության հոգևոր իմաստը:

1. Ես մեկանում եմ Քրիստոսի հետ Նրա խաչելության մեջ:

Գաղատացիներին 2:20.

«Ես Քրիստոսի հետ խաչը ելա: Այսուհետև ո՛չ թե ես եմ ապրում, այլ Քրիստոսն է, որ ապրում է իմ մեջ: Եվ այն կյանքը, որ այժմ ապրում եմ մարմնով, Աստծո Որդու հավատով եմ ապրում, որն ինձ սիրեց և Իրեն ինձ համար տվեց»:

Հռոմեացիներին 6:6.

«Այս իմանալով, որ մեր հին մարդը Նրա հետ խաչվեց, որպեսզի մեղքի մարմինը կործանվի, որ այլևս մեղքին չծառայենք»:

Իմ հին՝ մեղքի բնությունը խաչվել է Քրիստոսի հետ: Սա ինձ համար նաև հնարավորություն է՝ հրապարակայնորեն հայտարարելու, որ իմ մեղսալից սովորություններն ու վերաբերմունքները գամում եմ խաչին: Ես որոշում եմ դրանք թողնել խաչի վրա գամված, և ապրել Քրիստոսի տված նոր կյանքով՝ առանց այդ հին սովորությունների ու վերաբերմունքների: Ես գիտակցում եմ, որ պետք է այս հին, մեղսալից ճանապարհները մատնեմ մահվան, եթե ուզում եմ Քրիստոսի մեջ ճշմարիտ ազատություն ունենալ: Ես նաև գիտակցում եմ, որ սա կարող է ցավոտ գործընթաց լինել, սակայն հաստատ ոչ այնքան ցավոտ, որքան Քրիստոսի համար էր խաչի վրա:

2. Ես մեկանում եմ Քրիստոսի հետ Նրա մահվան մեջ:

Հռոմեացիներին 6:3.

«Դուք չգիտե՞ք, թե մեզանից ովքեր Հիսուս Քրիստոսի մեջ մկրտվեցին, Նրա մահվանը մկրտվեցին»:

Ջրի մկրտությամբ ես հրապարակայնորեն ցույց եմ տալիս, որ մահացել եմ այդ հին մեղսալից ապրելակերպի համար: Սա ասելը հեշտ է, սակայն այս հայտարարությամբ ամենօրյա կյանքում ապրելը կարող է դժվարին մարտահրավեր լինել մեզ համար: Մահը բաժանում է նշանակում:

Ես պետք է իմ հին ապրելակերպը տեսնեմ այնպիսին, ինչպիսին որ այն իրականում կար. դեպի կործանում տանող ուղի: Բայց Քրիստոսը եկավ և փրկեց ինձ: Ես որոշում եմ մահանալ իմ հին կենսակերպի համար և որոշում եմ ապրել այն նոր կյանքով, որը Քրիստոսն է բերել իմ մեջ: Երբ ես ջրով մկրտվում եմ, դրանով իսկ ասում եմ, որ իմ հին, մեղսալից, եսասեր մասը մահացել է:

Մահվան այս խորհուրդը չի նշանակում, որ ես փորձություններ չեմ ունենա: Ընդհակառակը: Կգան փորձություններ, որոնք կփորձեն ինձ տանել իմ հին ապրելակերպին: Բայց ես պետք է հիշեմ, որ իմ հին ապրելակերպը մահվան եմ դատապարտել: Ինչո՞ւ ես պետք է նորից փորեմ-հանեմ այդ հին, հոտած, որդնած, մեռած ապրելակերպը:

3. Ես մեկանում եմ Քրիստոսի հետ Նրա թաղման մեջ:

Հռոմեացիներին 6:4.

«Հետևաբար մենք մկրտությամբ Նրա հետ մահվան մեջ թաղվեցինք, որ ինչպես Քրիստոսը Հոր փառքով հարություն առավ մեռելներից, այնպես էլ մենք կյանքի նորոգության մեջ քայլենք»:

Երբ Քրիստոսը մահացավ, Նրան իջեցրին խաչից և թաղեցին գերեզմանում: Երբ ես ջրով մկրտվում եմ, դրանով իսկ հայտարարում եմ, որ թաղել եմ իմ հին, մեղսալից կյանքը. իմ հին ապրելակերպը: Իրականում Քրիստոսն է արել այդ գործը: Ինձնից ընդամենը պահանջվում է ընդունել Նրա արածը: Իմ հին ապրելակերպն ինձ տանում էր կործանման: Երբ ես դառնում եմ ճշմարիտ քրիստոնյա, կամավոր կերպով թողնում եմ իմ հին ապրելակերպը՝ գամելով այն խաչին և համարելով այն մեռած:

Դիակը թաղում են: Երբ ես մտնում եմ մկրտության ջրի մեջ, դա խորհրդապատկերում է հնի թաղումը:

4. Ես մեկանում եմ Քրիստոսի հետ Նրա հարության մեջ:

Հռոմեացիներին 6:4-5.

«Հետևաբար մենք մկրտությամբ Նրա հետ մահվան մեջ թաղվեցինք, որ ինչպես Քրիստոսը Հոր փառքով հարություն առավ մեռելներից, այնպես էլ մենք կյանքի նորոգության մեջ քայլենք: Քանի որ, եթե մենք միաձուլվեցինք Իր մահվան նմանությամբ, ապա նույնպես պիտի Իր հարության նմանությամբ լինենք»:

Ջրի մկրտությունը խորհրդապատկերում է, որ ես նոր կյանք եմ ստացել: Ես «վերստին եմ ծնվել» (Հովհաննես 3:3,7): Հոգևոր ծնունդը՝ փրկությունը, ընդամենը մտային երազ չէ, այլ հստակ փաստ է: Ճիշտ՝ ինչպես Քրիստոսը մեռելներից հարություն առավ, այդպես էլ իմ՝ ջրից դուրս գալը խորհրդապատկերում է այն նոր կյանքը, որը Քրիստոսն է ինձ տվել:

Երբ ես ապրում էի իմ հին, մեղսալից կյանքով, հոգևորապես մեռած էի: Քանի որ Քրիստոսն է հիմա ապրում իմ մեջ, ես ճշմարտապես կենդանի եմ. իմ ներսում արդեն նոր կյանք ունեմ:

Հիմա, երբ ես նոր կյանք եմ ստացել, այլևս կարիք չունեմ վախենալու այն մահից, որ սպասում էր ինձ իմ հին ապրելակերպի պատճառով: Ես հիմա կենդանի եմ, որովհետև Քրիստոսն է իմ մեջ ապրում:

5. Ես մեկանում եմ Քրիստոսի հետ Նրա նոր ապրելակերպի մեջ:

Գաղատացիներին 2:20.

«Ես Քրիստոսի հետ խաչը ելա: Այսուհետև ո՛չ թե ես եմ ապրում, այլ Քրիստոսն է, որ ապրում է իմ մեջ: Եվ այն կյանքը, որ այժմ ապրում եմ մարմնով, Աստծո Որդու հավատով եմ ապրում, որ ինձ սիրեց և Իրեն ինձ համար տվեց»:

Երբ ես որոշում եմ ջրով մկրտվել, դրանով իսկ հրապարակային հայտարարություն եմ անում, որ որոշել եմ ապրել Հիսուսի համար: Ես հիմա նոր կյանք եմ ապրում: Հիսուս Քրիստոսն է հիմա իմ կյանքի ղեկավարը: Նա ինձ կյանքի նոր նպատակ է տվել: Նրա զորությունն է, որ ինձ ամեն օր ուժեղ է պահում (տե՛ս նաև Հռոմեացիներին 6:4):

Բ. Ինչո՞ւ ես պետք է ջրով մկրտվեմ:

1. Դա Աստծուն հնազանդվելու ձև է (Մատթեոս 28:10-20):
2. Դա հրապարակային վկայություն է, որ ես դարձել եմ ճշմարիտ քրիստոնյա:
3. Դա ևս մեկ քայլ է իմ հոգևոր աճի մեջ:

Գ. Ե՞րբ ես պետք է ջրով մկրտվեմ:

Ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո ես պետք է ջրով մկրտվեմ (տե՛ս Գործք 2:38,41, 8:37-38, 19:4-5): Ինչքա՞ն ժամանակ ես պետք է սպասեմ: Աստվածաշունչը չի ասում, թե Քրիստոսի հետևորդ դառնալուց հետո ինչքա՞ն ժամանակ պետք է սպասես, որպեսզի ջրով մկրտվես: Վերը նշված համարները ցույց են տալիս, որ մարդիկ ջրով մկրտվում էին ճշմարիտ քրիստոնյա դառնալուց շատ չանցած: Այսօր շատ եկեղեցիներ ունեն ջրի մկրտության դասեր, որոնց պետք է մասնակցել նախքան ջրով մկրտվելը:

Բայց և այնպես, ամենակարևոր բանը, որ պետք է հիշել, այն է, որ ջրի մկրտությունը խորհրդապատկերում է այն փոփոխությունը, որն արդեն պետք է տեղի ունեցած լինի քո հոգում: Ջրի մկրտությունը դեռ քեզ ճշմարիտ քրիստոնյա չի դարձնում:

Եթե կյանքդ Քրիստոսին չես հանձնել, ուրեմն քրիստոնյա չես: Եթե ինչ որ մեկը, որ քրիստոնյա չէ, ջրով մկրտվում է, նա ջրի մեջ մտնում է չոր մեղավոր և ջրից դուրս է գալիս թաց մեղավոր:

Դ. Ջրի մկրտության արդյունքները:

Ջրի մկրտությունն ինքնին քո կյանքում ոչ մի հոգևոր փոփոխություն չի բերում: Դա պարզապես հրապարակային հայտարարություն է, որ դու քո կյանքը տվել ես Քրիստոսին: Դա հնազանդության քայլ է, որ անես այն, ինչ Աստված է քեզ ասել:

Ի՞նչ պետք է դու ակնկալես քո կյանքում այս փորձառությունից հետո: Ջրի մկրտությունից հետո սպասի՛ր փորձությունների: Հիսուսը փորձություններ կրեց, երբ ջրով մկրտվեց (տե՛ս Մարկոս 1:9-13):

Սատանան ուրախ չէ, որ դու փոփոխություններ ես կատարել քո կյանքում և մերժել ես նրան՝ որպես քո կյանքի առաջնորդ: Նա իր ուժերի ներածին չափով կանի ամեն բան քեզ հուսահատեցնելու համար, որպեսզի դու նորից մեջքով շրջվես Աստծո հանդեպ: Սակայն հիշի՛ր, որ Քրիստոսում ունեցած քո նոր կյանքում դու խոստում ունես քեզ համար, որ Աստված քեզ կօգնի և ուժ կտա, որպեսզի հաղթահարես ցանկացած փորձություն, որ սատանան կբերի քո կյանքում:

Գլուխ 6

Աղոթք

Ա. Ի՞նչ է աղոթքը:

1. Սահմանում:

Աղոթքը զրույց է Աստծո հետ: Դու խոսում ես Աստծո հետ, իսկ Աստված խոսում է քեզ հետ: Աղոթքը չպետք է մենախոսություն լինի, երբ միայն դու ես խոսում Աստծո հետ: Թո՛ւյլ տուր, որ Աստված խոսի քեզ հետ:

2. Ինչո՞ւ ես պետք է աղոթեմ:

Շատ կան պատճառներ, թե ինչու ես պետք է աղոթեմ Աստծուն: Ահա մի քանիսը.

ա. Աստծուց օգնություն ստանալու համար (Մատթեոս 7:7-8):

բ. Աստծո հետ հաղորդակցվելու համար (Առակաց 15:8):

գ. Ասելու համար Աստծուն, որ սիրում եմ Իրեն:

դ. Աղոթելու վերաբերյալ Աստծո պատվերին հնազանդվելու համար (Ա Թեսաղոնիկեցիներին 5:17):

ե. Աստծուն ավելի մոտենալու համար:

զ. Հիսուսի օրինակին հետևելու համար (Եբրայեցիներին 5:7):

3. Ո՞ւմ պետք է ես աղոթեմ:

Երբ Հիսուսը երկրի վրա էր, Նա աղոթում էր Հայր Աստծուն: Հիսուսի օրինակը հրաշալի է մեզ համար, որ հետևենք: Սակայն սխալ չէ նաև Հիսուսին կամ Սուրբ Հոգուն աղոթելը: Նորմալ է, եթե աղոթքի ժամանակ շնորհակալություն հայտնես Սուրբ Երրորդության բոլոր երեք անձերին:

Սուրբ Երրորդության երեք անձերի հետ քո զրույցը կարելի է բացատրել հետևյալ ձևով: Դու աղոթում ես Հայր Աստծուն՝ Հիսուսի անունով, Սուրբ Հոգու զորությամբ:

Բ. Ինչպե՞ս պետք է աղոթեմ:

1. Սովորական խոսակցական ձևով:

Աստծո հետ խոսի՛ր այնպես, ինչպես կխոսեիր որևէ մեկի հետ: Աղոթքի համար հատուկ բառեր չկան: Աստծո հետ քո խոսակցությունը վարի՛ր այնպես, ինչպես քո ընկերոջ հետ:

2. Անկե՛ղծ եղիր Աստծո հետ:

Աստծուն աղոթելիս անկե՛ղծ եղիր: Աստված քեզ ավելի լավ գիտի, քան թե ցանկացած ուրիշ անձնավորություն: Այնպես որ, մի՛ փորձիր Նրանից ինչ-որ բան թաքցնել: Քո աղոթքը դարձրո՛ւ Աստծո հետ բացարձակ անկեղծ ու ազատ զրույցի մի ժամանակ: Եթե բարկացած ես, հուսահատված կամ ճնշված, ասա՛ Աստծուն: Պատմի՛ր նրան, թե հատկապես ի՛նչ ես զգում ու ի՛նչ ես մտածում:

3. Կոնկրե՛տ եղիր թեմայի շուրջ:

Աղոթքի մեջ ընդհանրական մի՛ եղիր: Աղոթի՛ր որոշակի բաների համար: Եթե դու կոնկրետ բաների համար աղոթես, կկարողանաս տեսնել, որ Աստված պատասխանում է քո աղոթքներին: Այսպիսի աղոթքը՝ «Աստվա՛ծ իմ, օգնի՛ր, որ աշխարհի բոլոր թմրամոլներն ապաշխարեն», չափազանց ընդհանրական է իմաստալից լինելու համար:

Հետևյալ աղոթքն ավելի նպատակային է. «Աստվա՛ծ իմ, եղբայրս թմրամոլ է: Օգնի՛ր ինձ, որ այս շաբաթվա ընթացքում կարողանամ կիսվել նրա հետ այն բաների մասին, որոնք Դու կատարում ես իմ կյանքում: Օգնի՛ր ինձ՝ իմ սերը եղբորս հանդեպ այնպես ցույց տալ, որ նա ցանկանա Քեզ ավելի լավ ճանաչել և ցանկանա դառնալ ճշմարիտ քրիստոնյա»:

4. Քո մարմնի դիրքը կարևոր չէ:

Աղոթելիս քո մարմնի դիրքն այնքան կարևոր չէ, որքան՝ քո մտքի և հոգու: Երբ աղոթում ես, մտածի՛ր, թե ինչ ես ասում Աստծուն: Հարմար դի՛րք ընդունիր, երբ ուզում ես աղոթել (այնպե՛ս արա, որ արթուն մնաս):

Գ. Ի՞նչ պետք է ասեմ աղոթելիս:

Երբ աղոթում ես, ի՞նչ պետք է ասես Աստծուն: Որոշ նորադարձ հավատացյալների համար կարող է դժվար լինել աղոթելը, որովհետև նախկինում երբեք պարբերաբար չեն աղոթել: Կարևոր է հասկանալ, որ աղոթելու տարբեր ձևեր կան, չկա մեկ կատարյալ ձև:

Դու պետք է Աստծո մասին մտածես որպես քո ընկերոջ և Նրա հետ զրուցես՝ ինչպես կզրուցեիր քո լավագույն ընկերոջ հետ: Ներքևում կան մի քանի կետեր, որոնք դու կարող ես ներառել Աստծո հետ քո զրույցի մեջ: Մի՛ վախեցիր, որ սխալներ կանես, պարզապես աղոթի՛ր:

1. Երկրպագի՛ր Աստծուն:

Ասա՛ Աստծուն, որ սիրում ես Իրեն և գնահատում: Աստծուն փառաբանելը Նրան երկրպագելու լավագույն ձևերից մեկն է: Դրա համար դու Աստծո ներկայությամբ կարող ես մեջբերումներ անել Սուրբ Գրքից, օրինակ՝ սաղմոսներից:

2. Խնդրի՛ր Աստծուն, որ ների քո մեղքերը:

Եթե անհնազանդ ես եղել Աստծո հանդեպ, կամ չես արել մի բան, որն ըստ քեզ՝ ճիշտ կլիներ անել, ուրեմն՝ ներո՛ւմ խնդրիր Աստծուց: Տե՛ս Սաղմոս 66:18-ը և Եսայի 59:2-ը:

3. Շնորհակալությո՛ւն հայտնիր Աստծուն:

Ա Թեսաղոնիկեցիներին 5:18-ը մեզ ասում է. «Ամեն ինչում գոհությո՛ւն մատուցեք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար Քրիստոս Հիսուսով»: Շնորհակալությո՛ւն հայտնիր Աստծուն Իր արած բոլոր բաների համար: Շնորհակա՛լ եղիր Աստծուն, որ օգնում է քեզ, որպեսզի կարողանաս հնազանդվել Իր Խոսքին: Շնորհակալությո՛ւն հայտնիր Աստծուն, որ օգնում է քեզ՝ քո առօրյա կյանքում աստվածաշնչյան սկզբունքները կիրառելիս:

Հնարավոր է՝ հեշտ չլինի, բայց մենք կարիք ունենք սովորելու՝ շնորհակալություն հայտնել Աստծուն այն խնդիրների համար, որոնք Նա ուղարկում է մեր կյանքում: Շնորհակալությո՛ւն հայտնիր Աստծուն, որ Նա օգտագործելու է այդ բոլոր խնդիրները մեզ աճեցնելու համար: Նա կօգտագործի այդ խնդիրները, որպեսզի սովորենք ապավինել Նրա զորությանը, որը մեզ կօգնի անցնել դժվարին իրավիճակներով: Տե՛ս Փիլիպպեցիներին 4:6-ը և Հակոբոս 1:2-8-ը:

4. Աղոթքով քո բոլոր խնդրանքները բե՛ր Աստծուն:

Փիլիպպեցիներին 4:6-ն ասում է՝ «...ձեր խնդրանքները հայտնի լինեն Աստծուն»: Աղոթի՛ր քո բոլոր կարիքների համար, ինչպես նաև՝ ուրիշ մարդկանց կարիքների համար: Սովորի՛ր քո կյանքում հանդիպող տարբեր խնդիրների վերաբերյալ տարբեր ձևերով խոսել Աստծո հետ: Կարևորը «սովորելն» է: Աղոթելով մենք սովորում ենք, թե ինչպես Աստծուն պահենք մեր մտքում, երբ օրվա ընթացքում հանդիպում ենք տարբեր իրավիճակների:

Աղոթելու մեկ այլ տարբերակ է՝ Աստվածաշնչի մեջ աղոթքներ փնտրելը և դրանք քո աղոթքների մեջ ներդնելը: Կարդալիս դարձրո՛ւ դրանք քո աղոթքը: Նոր Կտակարանի շատ գրքեր գրվել են Պողոսի կողմից և աղոթքներ են պարունակում հիմնականում առաջին գլխում: Տե՛ս Եփեսացիներին 1:15-23-ը:

5. ղոթի՛ր այնպես, ինչպես Սուրբ Հոգին է քեզ առաջնորդում աղոթել:

Երբ Հիսուսի երկրավոր ժամանակը մոտենում էր ավարտին, Նա Իր աշակերտներին ասաց, որ երբ Ինքը գնա, Սուրբ Հոգին կգա և կօգնի մեզ: Լինում են իրավիճակներ, երբ մենք չգիտենք, թե ինչպես աղոթել դրանց համար: Նման դեպքերում մենք կարող ենք խնդրել Սուրբ Հոգուն, որ օգնի մեզ:

Եփեսացիներին 6:18.

«Բոլոր աղոթքներով ու աղաչանքներով միշտ Հոգով աղոթելով ու, հենց այս բանում, բոլոր սրբերի համար կատարյալ հարատևությամբ և աղաչանքներով արթո՛ւն հսկելով»:

Աստվածաշունչը նաև ասում է մեզ, որ երբ մենք չենք իմանում, թե տվյալ իրավիճակի համար ինչպես աղոթել, Սուրբ Հոգին կօգնի մեզ:

Հռոմեացիներին 8.26.

«Այսպես էլ Հոգին օգնում է մեր տկարություններին, որովհետև մենք չգիտենք, թե ինչի համար և ինչպես պետք է աղոթենք, բայց Ինքը՝ Հոգին, անարտասանելի հեծեծանքով աղոթում է մեզ համար»:

Դ. Որո՞նք են աղոթելու օգուտները:

1. Աղոթքը քեզ օգնում է ավելին բացահայտել քո երկնային Հոր մասին:

Որոշ հավատացյալների համար Աստված օտար է թվում: Ինչքան շատ ես դու աղոթում, այնքան լավ ես ճանաչում քո Երկնային Հորը: Երբ աշակերտները Հիսուսին խնդրեցին իրենց աղոթել սովորեցնել, Նա նրանց մի պարզ աղոթք սովորեցրեց, որը սկսվում է մեր երկնային Հոր հետ խոսելով:

Մատթեոս 6:9.

**«Ուրեմն դուք այսպե՛ս աղոթեք. «Ո՛վ Հայր մեր, որ երկնքում ես,
Քո անունը սուրբ լինի»:**

2. Աղոթքը քեզ օգնում է Աստծուց օգնություն ստանալ կարիքի դեպքում:

Աստված միշտ պատրաստ է մեզ օգնել: Մենք պետք է սովորենք խնդրել Աստծո օգնությունը, երբ դժվարին իրավիճակների ենք հանդիպում:

Եբրայեցիներին 4:16.

**«Ուրեմն, համարձակությամբ մոտենանք շնորհաց աթոռին,
որպեսզի ողորմություն ընդունենք և շնորհ գտնենք՝ կարիքի ժամանակ
մեզ օգնելու»:**

Տե՛ս նաև Բ Կորնթացիներին 12:7-10-ը և Հակոբոս 1:2-8-ը:

3. Աղոթքն օգնում է Աստծո խաղաղությունն ու ազատությունը գտնել, երբ խնդիրների մեջ ենք:

Հեշտ է անհանգստանալ և հուսահատվել, երբ խնդիրներ են ստեղծվում մեր կյանքում: Աղոթքը կարող է մի հզոր միջոց լինել մեր կյանքի դժվարին իրավիճակներում հին սովորությունները և արձագանքները քանդելու հարցում:

Փիլիպպեցիներին 4:6-7.

**«Ոչ մի բանի մասին մի՛ մտահոգվեք, այլ թող ամեն բանում աղոթքով,
աղաչանքով ու գոհությամբ՝ ձեր խնդրանքները հայտնի լինեն Աստծուն:
Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն հասկացողությունից վեր է,
պիտի պահի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով»:**

4. Աղոթքն օգնում է ընդունել Սուրբ Հոգուն:

Հիսուսի՝ երկինք գնալուց հետո Նրա հետևորդները մեկտեղ հավաքվեցին, որպեսզի ամեն օր աղոթեն, մինչև Աստծուց հատուկ պատասխան կստանային: Մի հատուկ օր Սուրբ Հոգին եկավ նրանց վրա, և նրանք սկսեցին օտար լեզուներով խոսել (տե՛ս Գործք 2-րդ գլուխ և Գործք 4:31):

Այսօր մեզնից ամեն մեկի համար մենք ունենք խոստում, որ երբ Հիսուսին հրավիրենք մեր սիրտ և խնդրենք Նրան՝ ներել մեր մեղքերը, հենց այդ պահին Սուրբ Հոգին կգա մեր կյանք:

Ղուկաս 11:13.

«Ուստի դուք որ չար եք և գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, ապա որքա՜ն ավելի ձեր Երկնավոր Հայրը կտա Սուրբ Հոգին նրանց, ովքեր խնդրում են Նրանից»:

5. Աղոթքն օգնում է բացահայտել Աստծո կամքը քո կյանքի համար:

Շատ համարներ մեզ ասում են, որ Աստված ծրագիր ունի մեր կյանքի համար: Նա ուզում է, որ դու հասկանաս Իր ծրագիրը քո՛ կյանքի համար: Աղոթքը շատ կարևոր գործոն է՝ բացահայտելու համար, թե ինչ է Աստված ուզում, որ դու անես: Նույնիսկ Հիսուսն աղոթեց Աստծուն, որպեսզի հարցնի, թե ինչ էր Աստված ուզում, որ Նա անի:

Ղուկաս 22:41-43.

«Ապա մի քարընկեցի չափ հեռացավ նրանցից, ծնկի եկավ ու աղոթեց՝ ասելով. «Հա՛յր, եթե կամենում ես, այս բաժակը հեռացրո՛ւ Ինձնից: Բայց ոչ թե Իմ կամքը, այլ Քո կամքը թող լինի»: Եվ երկնքից հրեշտակ հայտնվեց Նրան, որ զորացնում էր Նրան: Ինքը սաստիկ տառապանքի մեջ լինելով ավելի ջերմեռանդ էր աղոթում»:

6. Աղոթքն օգնում է պատրաստվել Հիսուսի գալստյանը:

Հիսուսն ասաց, որ վերադառնալու է, որ մենք պետք է մշտապես պատրաստ լինենք Նրա վերադարձին: Երբ Հիսուսի աշակերտները հարցրին Նրան, թե երբ է Նա գալու, Հիսուսը նրանց ոչ մի հստակ ժամկետ չասաց: Սակայն Նա ասաց, որ մենք պետք է միշտ պատրաստ լինենք: Աղոթքը մեզ կարող է օգնել, որ մեր ուշադրությունը կենտրոնացնենք (և սա, իրոք, շատ կարևոր է) Նրա վերադարձին մեր պատրաստ լինելու վրա:

Ղուկաս 21:36.

«Ուրեմն արթո՛ւն եղեք, և միշտ աղոթե՛ք, որպեսզի արժանի լինեք ազատվելու բոլոր այն բաներից, որ պիտի գան, և կանգնեք Մարդու Որդու առջև»:

Ե. Ինչպե՞ս կարող եմ ստանալ իմ աղոթքների պատասխանները:

1. Ակնակալի՛ր, որ Աստված պատասխանելու է:

Եթե Հիսուսն է ղեկավարում քո կյանքը, և դու խնդրում ես Նրա կամքի համեմատ, ապա կարող ես ակնկալել, որ Աստված կպատասխանի քո աղոթքներին (տե՛ս Ա Հովհաննես 5:14-15-ը): Մենք բոլորս էլ ուզում ենք, որ մեր աղոթքները պատասխան ունենան, բայց Աստված միշտ չէ, որ տալիս է մեր ուզածները: Երբ դու աղոթում ես, կենտրոնացրո՛ւ քո աղոթքները, որպեսզի կարողանաս տեսնել, թե արդյո՞ք Աստված պատասխանել է դրանց:

Եթե դու չես ակնկալում, որ Աստված պատասխանելու է քո աղոթքներին, ապա, ամենայն հավանականությամբ, Նա չի պատասխանի քո դրանց (տե՛ս Հակոբոս 1:6-7):

2. Ընդունի՛ր Աստծո պատասխանը:

Երբեմն մարդիկ ուզում են, որ Աստված ուղղակի երկնքում նստած «այո» ասի, երբ ամեն անգամ իրենք ինչ-որ բան են խնդրում Նրանից: Երբ դու Աստծուց ինչ-որ բան ես խնդրում, իմացի՛ր, որ Նա կարող է քեզ տալ հետևյալ երեք պատասխաններից մեկը. «Այո՛», «Ո՛չ», «Սպասի՛ր»: Ինչ պատասխան էլ որ Նա տա, ընդունի՛ր այն:

Պողոսը մեծ ջերմեռանդությամբ երեք անգամ աղոթեց՝ խնդրելով Աստծուն, որ իր կյանքից ինչ-որ խնդիր վերացնի: Սակայն Աստծո պատասխանը եղավ՝ «ո՛չ»: Դրա փոխարեն Աստված Պողոսին ասաց, որ նրան կտա հարկ եղած ողջ զորությունը՝ այդ խնդրի միջով անցնելու համար (տե՛ս Բ Կորնթացիներին 12:7-10-ը): Ուշադի՛ր նայիր, թե ինչպես արձագանքեց Պողոսն Աստծո տված պատասխանին՝ չնայած, որ պատասխանը եղել էր՝ «ո՛չ»:

Զ. Ինչո՞ւ ես չեմ ստանում իմ աղոթքների պատասխանները:

Մեզնից շատերը կարող են հիշել դեպքեր, երբ աղոթել ենք Աստծուն ու ինչ-որ բան խնդրել, սակայն չենք ստացել մեր ուզածը: Ինչպես վերևում նշեցինք՝ Աստված երբեմն կարող է պատասխանել՝ «ո՛չ» կամ «սպասի՛ր»: Անհրաժեշտ է, որ դու հասկանաս, որ Աստված, իրոք, ուզում է քեզ մոտիկ լինել: Սաղմոս 145:18-ն ասում է. «Տերը մոտ է բոլոր նրանց, որ կանչում են Իրեն, բոլոր նրանց, որ ճշմարտապես են կանչում Իրեն»:

Ահա մի քանի հարցադրումներ, որոնք իրոք բացատրում են, թե ինչու մենք երբեմն չենք ստանում մեր աղոթքների պատասխանները:

1. Դու Աստծուց սխալ բա՞ն ես խնդրում:

Հնարավոր է՝ Աստծո ծրագրերը տարբեր են քո ծրագրերից: Երբեմն մեր խնդրածն այն չէ, ինչ Աստված է ծրագրել մեզ համար: Եթե դու քո աղոթքներին պատասխան չես ստանում, խնդրի՛ր Աստծուն, որպեսզի քեզ օգնի հասկանալ, թե ինչ է Նա ուզում քեզ համար: Երբ Աստծուն հարց ես տալիս, ինչքա՞ն հաճախ է երկնքից լռությունը լինում պատասխանը:

Հակոբոս 4:14-15.

«Այնինչ դուք չգիտեք, թե վաղն ինչ է լինելու. քանի որ ի՞նչ է ձեր կյանքը: Այն գոլորշի է, որ կարճ ժամանակով երևում ու անհետանում է: Դրա փոխարեն պետք է ասեիք. «Եթե Տերը կամենա, ու ապրենք, այս կամ այն բանը կանենք»:

Հակոբոս 4:3.

«Խնդրում եք և չեք ստանում, որովհետև վատ նպատակով եք խնդրում, որ ձեր ցանկություններին ծառայեցնեք»:

Երբեմն մենք Աստծուց այնպիսի պատասխաններ ենք խնդրում, որոնք Նա պատրաստ չէ մեզ տալու: Մենք, հնարավոր է, ցանկանանք ինչ-որ բաներ իմանալ ապագայի վերաբերյալ, սակայն Նրա պատասխանը լինի՝ «Ես չեմ պատրաստվում քեզ հետ այդ մասին խոսել այսօր»: Աստված հաճախ չի բացահայտում մեր ապագան: Նա ցանկանում է, որ մենք սովորենք, թե ինչպես այսօր ապրենք՝ Նրան հնազանդվելով: Նա գիտի լավագույն ժամանակը, թե երբ մեզ տեղեկություն հայտնի մեր ապագայի վերաբերյալ: Մենք կարիք ունենք սովորելու, թե ինչպես լավագույն ձևով անցկացնենք այսօրը:

2. Դու մեղքին կառչա՞ծ ես քո կյանքում:

Եթե մենք մեղքին կառչած ենք մեր կյանքում, ապա դրա պատճառով կարող ենք դադարեցնել մեր անձնական աղոթքները: Մեղքը մեզ բաժանում է Աստծուց: Սա չի նշանակում, որ մենք պետք է կատարյալ լինենք՝ նախքան Աստված կպատասխանի մեր աղոթքներին: Իրականում շատ անգամ Աստված պատասխանում է աղոթքներին, նույնիսկ երբ մարդիկ ապրում են մեղքի մեջ: Սակայն մեղքը մեզ կարող է հեռու պահել Աստծո հետ անկեղծ փոխհարաբերություն ունենալուց:

Եթե տեսնում ես, որ քո աղոթքներին պատասխան չես ստանում, կարող ես ասել. «Աստվա՛ծ իմ, եթե իմ կյանքում մեղք կա, որն ինձ խանգարում է լսել իմ աղոթքներին ուղղված Քո պատասխանը, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ՝ տեսնել այդ մեղքը: Ես ուզում եմ խոստովանել դա և ավելի մոտենալ Քեզ»:

Սաղմոս 66:18.

«Եթե սրտիս մեջ անօրենություն տեսնեի, Տերը չէր լսելու»:

Առակաց 28:13.

«Նա, ով ծածկում է իր մեղքերը, հաջողություն չի ունենա, բայց ով խոստովանում ու հեռանում է դրանցից, ողորմություն է գտնելու»:

3. Դու հրաժարվո՞ւմ ես Աստծուն լսել:

Եթե դու կամենում ես միայն «այո» լսել Աստծուց ամեն անգամ, երբ աղոթում ես, ուրեմն անակնկալի չգաս, եթե քո աղոթքները պատասխան չստանան: Մենք պետք է ունենանք հետևյալ վերաբերմունքը. «Աստվա՛ծ իմ, ես ուզում ես լսել Քեզ: Ասա՛ ինձ՝ ինչ ցանկանում ես, որովհետև ես ուզում եմ հնազանդվել Քեզ»:

Առակաց 28:9.

«Նա, ով օրենքը չլսելու համար փակում է ականջը, նրա աղոթքն անգամ գարշելի է»:

4. Որոշ աղոթքներ պայմանական են:

Որոշ աղոթքներ պատասխան չեն ստանա, քանի դեռ չենք արել այն, ինչ Աստված ուզում է, որ մենք անենք:

Հաճախ պայմանը հնազանդությունն է, որպեսզի մենք Աստծուց պատասխան ստանանք: Մենք չենք կարող ասել. «Աստվա՛ծ իմ, ասա՛ ինձ այն, ինչ ես ուզում եմ լսել, այդ դեպքում ես կհնազանդվեմ Քեզ»: Դրա փոխարեն մենք պետք է ասենք. «Աստվա՛ծ իմ, այսօր պատրաստ եմ հնազանդվել Քեզ, և ես քայլ առ քայլ կհնազանդվեմ Քեզ, եթե նույնիսկ հատուկ պատասխան չլսեմ Քեզնից»:

Ահա մի քանի պայմաններ, որոնք կարող են ազդել մեր աղոթքների վրա.

1. Դու պետք է խոստովանես քո մեղքերը:
2. Դու պետք է քո խղճմտանքը մաքուր պահես:
3. Դու պետք է միշտ սեր ցույց տաս մարդկանց հանդեպ:
4. Դու պետք է ներես նրանց, ովքեր նեղացրել են քեզ:

Ա Հովհաննես 3:22-24.

«Եվ ինչ որ խնդրենք, կստանաք Նրանից, որովհետև պահում ենք Նրա պատվիրանները և կատարում ենք այն, ինչ հաճո է Նրան: Եվ սա՛ է Նրա պատվիրանը, որ հավատանք Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի անվանը, ու սիրենք միմյանց, ինչպես որ մեզ պատվիրեց: Եվ նա, ով պահում է Նրա պատվիրանները, մնում է Նրա մեջ, և Նա էլ՝ իր մեջ: Ու սրանով ենք իմանում, որ Նա բնակվում է մեր մեջ, Հոգու միջոցով, որ Նա մեզ տվեց»:

5. Դու կասկածների մե՞ջ ես:

Երբեմն կասկածներն ու անհավատությունը կարող են խանգարել մեր աղոթքների՝ պատասխան ստանալուն: Եթե դու չես հավատում, որ Աստված կպատասխանի քո աղոթքին, ապա քո կասկածը կարող է լինել հենց այն արգելքը, որը չի թողնի, որ քո աղոթքները պատասխան ունենան:

Եբրայեցիներին 11:6.

**«Բայց առանց հավատի անհնար է Նրան հաճեցնել. որովհետև Աստծուն մոտեցողը նախ պետք է հավատա, թե Աստված կա,
և Նա վարձահատույց է լինում իրեն փնտրողներին»:**

Հակոբոս 1:6-7.

**«Միայն թե թող հավատով խնդրի, առանց երկմտելու, քանի որ երկմտողը նման է ծովի հողմակոծ, տարուբերվող ալիքներին:
Այդպիսի մարդը թող հույս չունենա, թե Տիրոջից որևէ բան կստանա»:**

Է. Ե՞րբ ես պետք է աղոթեմ:

1. Երբեք մի՛ դադարիր:

Ա Թեսաղոնիկեցիներին 5:17-ն ասում է. «Անդադար աղոթեցե՛ք»:
Սա նշանակում է, որ դու պետք է տեղյակ լինես, որ Աստված միշտ լսում է քեզ: Հիշի՛ր, որ դու ցանկացած ժամանակ կարող ես զրուցել Նրա հետ: Դու միշտ պետք է աղոթքի տրամադրվածություն ունենաս:

2. Պարբերաբար աղոթքի ժա՛մ ունեցիր:

Փորձի՛ր ամեն օր ժամանակ հատկացնել՝ միայնակ մի քանի րոպե աղոթելու համար (տե՛ս Մատթեոս 6:6-ը):

3. Խմբային աղոթք:

Այլ մարդկանց հետ աղոթելու բազմաթիվ հնարավորություններ կան. աղոթաժողովներ, եկեղեցական ժողովներ, փոքր (տնային) խմբեր, ընտանեկան հանդիպումներ և այլն:

Ը. Ինչո՞ւ է աղոթքն այդքան դժվար:

Անակնկալի չգաս, եթե դժվարանաս աղոթել: Եթե դու նախկինում աղոթքներ շատ չես արել, ապա քեզ համար կարող է դժվար լինել: Կախարդական փայտիկ չկա, որ ակնթարթորեն աղոթքը հեշտացնի քո մնացած ողջ կյանքի համար: Սակայն եթե դու շարունակես աղոթել, կսովորես, թե ինչպես այն դարձնել ամեն օրվա ավելի կարևոր մասը:

1. Դու բարկացա՞ծ ես Աստծո վրա:

Անցյալի ցավոտ դեպքերի պատճառով շատ անգամ հավատացյալներն Աստծո հանդեպ բարկության հետ կապված խնդիր են ունենում: *«Եթե Աստված իրոք սիրում է ինձ, ուրեմն ինչո՞ւ Նա թույլ տվեց, որ այդ բանը տեղի ունենա»:* Կամ էլ բարկություն կարող է առաջանալ պարզապես այն պատճառով, որ դու պատասխան չես ստացել քո աղոթքին:

Երբ քեզ մոտ գտնվող մարդիկ բարկանում են Աստծո վրա, դա նույնպես կարող է խարխլել Աստծո հանդեպ քո վստահությունը: Թույլ մի՛ տուր, որ մյուս մարդկանց խնդիրները քո ձեռքից խլեն Աստծուն ավելի մոտենալու հնարավորությունը (տե՛ս Հոբ 21:15):

2. Դու համոզվա՞ծ ես, որ Աստված լսում է քո աղոթքները:

Նորադարձ հավատացյալները կարող են աղոթել սովորել: Դու, հնարավոր է, ասես. «Ինչպե՞ս իմանամ, որ Աստված իրոք լսում է իմ աղոթքները: Ես կարծես ինքս ինձ հետ խոսելիս լինեմ»:

Պետք է հետևողական լինես, որ քո աղոթքները հիմնես Աստվածաշնչի ասածների վրա, ոչ թե քո զգացմունքների կամ մտքերի: Աստվածաշունչը մեզ ասում է, որ աղոթենք:

Մարկոս 11:24.

«Սրա համար ասում եմ ձեզ, թե աղոթք անելիս ինչ որ խնդրեք, հավատացե՛ք, թե կստանաք, ու կտրվի ձեզ»:

Դու պետք է հավատաս, որ կստանաս այն ամենը, ինչը համընկնում է Աստծո կամքի հետ: Սակայն հավատալը, որ դու կստանաս քո ուզածը, ինքնաբերաբար չի նշանակում, որ անպայման այն կստանաս:

3. Դու քո կյանքում շա՞տ խնդիրներ ես ունենում:

Չնայած այն բանին, որ կիրակի օրը եկեղեցում աղոթելը համեմատաբար շատ հեշտ է լինում, այնուամենայնիվ, աղոթքը կարող է ծանր գործ դառնալ, եթե անցնում ես դժվարություններով, մեծ փորձություններով, ընտանեկան ճնշումներով, աշխատանքային լարվածությամբ կամ ուսումնական խնդիրներով: Հարց. եթե այս բոլոր խնդիրները սկսեն հեղեղել ինձ, ուրեմն, ես ինչպե՞ս պետք է աղոթեմ:

Երբ խնդիրներն ամեն կողմից պաշարում են քեզ, ուրեմն դու քո կյանքում աղոթքին պետք է ավելի մեծ տեղ տաս, նույնիսկ եթե իրադրությունը չի բարելավվում:

Ղուկաս 18:1.

«Եվ Նա մի առակ ասաց նրանց այն բանի վերաբերյալ, թե ամեն ժամանակ պետք է աղոթել ու չվհատվել»:

Հակոբոս 5:13.

«Ձեզանից մեկը նեղության մե՞ջ է, թող աղոթի: Մեկն ուրա՞խ է, թող սաղմոս երգի»:

4. Դու հալածանքնե՞ր ես ենթարկվում:

Երբ դու ապրում ես դժվար բնավորություն ունեցողի հետ, կամ հալածանքներ ես կրում մարդկանցից, ի՞նչ ես ասում Աստծուն: Դու աղոթում ես. «Աստվա՛ծ իմ, ազատի՛ր ինձ այստեղից», կամ՝ «Ազատի՛ր ինձ այս մարդուց»:

Հիսուսը խիստ յուրահատուկ խորհուրդ է տալիս մեզ, թե ինչպես պետք է աղոթենք, երբ մարդիկ դժվարացնում են մեր կյանքը:

Մատթեոս 5:44.

«Բայց Ես ձեզ ասում եմ. սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարի՛ք արեք ձեզ ատողներին և աղոթեցե՛ք նրանց համար, ովքեր վատ են վարվում ձեզ հետ և հալածում»:

Եթե դու աշխատես Աստծուն քո կյանքի ամենակարևոր անձնավորությունը դարձնել, Նա քեզ կօգնի: Նա քո կյանքի բոլոր իրավիճակների համար քեզ ուժ, իմաստություն և սեր կտա: Պարզապես շարունակի՛ր ամեն օր զրուցել Նրա հետ:

Հավելյալ ընթերցանության և ուսումնասիրության համար, խնդրում եմ, այցելե՛ք մեր կայք՝ հետևյալ հասցեով. www.iteenchallenge.org.